

**ԴԱՐԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐՆԸ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԵՐԻ
ՀԱՍՏԵՍԱՏԱԿԱՆ - ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Աֆղանստանում լայն գործածություն ունեցող դարին, պարսկերենի հետ մշամակալի ընդհանրություններ ունենալով հանդերձ, դրսևորում է մաս լեզվական բազմաբնույթ տարբերություններ լեզվանյութի ամենատարբեր մակարդակներում: Ընդ որում, եթե լեզվական ընդհանրությունները հիմնականում պայմանավորված են այդ լեզուների ընդհանուր ցեղակցական, պատմական կապերով, ապա այսօրվա դրությամբ արձանագրվող նրանցից յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները նրանց առանձին, ինքնուրույն զարգացման արդյունք են: Այս խնդրին վերաբերող լեզվական նյութի դիտարկումները, ինչպես մաս դարի և պարսկերեն լեզուների կրողների ընդհանուր պատմական անցյալը արտացոլող գրականության հետ ծանոթությունը հնարավորություն է ընձեռում լիակատար պատկերացում կազմել երկու լեզուների միջև ձևավորված փոխհարաբերությունների, այդ թվում մաս նրանց առանձին տարբերությունների, միմյանցից զանազանվելու և սահմանազատվելու հանգամանքների մասին: Խնդիրը, որը իր որոշ մասերում առանձին դեպքերում ընդհանուր գծերով արծարծվել է իրանագիտական որոշ աշխատություններում, սակայն իր ամբողջության մեջ առաջին անգամ քննության առարկա է դառնում ներկա հոդվածում: Նրա լուծման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն կարող է որոշակի դեր խաղալ և՛ պատմահամեմատական հիմնարար ուսումնասիրությունների իրականացման համար, և՛ թե գործածական-կիրառական մի շարք խնդիրների լուծման ժամանակ՝ դարի և պարսկերեն լեզուները արտացոլող անհրաժեշտ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բառարանների կազմության, ինչպես մաս թարգմանչական աշխատանքներ ծավալելիս:

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերի համեմատական-համադրական դիտարկումների ընթացքում բացահայտվող տարբերությունները՝ ըստ իրենց լեզվական բնույթի, դասակարգվում են երեք հիմնական խմբերի՝ իմաստաբանական, բառակազմական և բառափոխական:

I. Դարի յոզվի քառային կազմի իմաստաբանական առանձնահատկությունները ասարկեռենի համադրությամբ

Դարի և պարսկերեն լեզուները ընդհանուր առմամբ ունեն բառային կազմերի մեծ քանակ կազմող ընդհանրություններ: Սիևնույն ժամանակ նրանք շատ հաճախ տարբերվում են միմյանցից բառային կազմերի առանձին կողմերին բնորոշ առանձնահատկություններով, որոնք վերաբերում են հասարակական-քաղաքական, ֆինանսատնտեսական, գիտակրթական, գիտատեխնիկական ոլորտներին, ինչպես մաս դիվանագիտության, արդյունաբերության, գյուղատնտեսության, առողջապահության բնա-

գավառներին: Պարսկերենի համադրությամբ դարիի բառային կազմը բնութագրվում է մաև նրան բնորոշ առանձնահատկություններով, որոնք վերաբերում են կենդանական և բուսական աշխարհի, մարդու մարմնի մասերի, հիվանդությունների, ազգակցական կապերի, արհեստների, աշխարհագրական, ռազմական բնագավառների տերմինաբանությանը, ինչպես նաև առօրյա-կենցաղային և առանձին հատկանիշներ արտացոլող հասկացությունների խմբերին: Այստեղ, առաջին հերթին, տարբերակման ենթակա են տարբեր առարկայական հարաբերակցության ձևաիմաստային կառուցվածքի ու կիրառության բառերի առանձին խմբերը, որոնցից մասնավորապես առանձնացվում են.

Հասարակական-քաղաքական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ (դարի և պարսկերեն լեզուներից բերվող օրինակները ներկայացվում են լատինատառ, դարի, պարսկերեն հերթականությամբ) *rezākār-nikukār* (բարեգործ), *noḥus šomāri-saršomāri* (մարդահամար), *haywādāwāl - hamvatan* (հայրենակից) և այլն:

Տնտեսական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ *bārcālāni- bārkeši* (բեռների առաքում), *tahwīlxāna-anbār* (պահեստ), *lilām²- harraʔ* (աճուրդ) և այլն:

Ֆինանսական ոլորտին բնորոշ բառեր՝ *as'ār-e xāreja - arz-e xāreji* (արտաբյուր), *āyed-darāmad* (եկամուտ), *fiṣad-dārsad* (տոկոս), *qeymat-e tamāmsod-arzeš-e māye* (ինքնաբեք) և այլն:

Գիտակրթական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ *ta'limāt-e sānawī-tahsilāt-e motevassete* (միջնակարգ կրթություն), *layliya³-xābgah* (հանրակացարան), *maktab-e layliya - sābāneruzi* (գիշերօթիկ) և այլն:

Տեխնիկական բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ *estreng - farmān - e otomobil* («մեքենայի ղեկ»), *barma-ye barqi - drel - e barqi* (էլեկտրաշաղախ), *hefz o morāqebat-bahrebardāri* (շահագործում), *regmāl-sonbāde* (եղկաթուղ) և այլն:

Գիվանագիտության ոլորտին բնորոշ բառեր-տերմիններ՝ *seyxossofarā⁴- moqaddamossofarā* (գիվանագիտական ներկայացուցչությունների ավագ), *qayr-e monsalek - qeyre moteahed* (չմիացող), *sekartar - monsi* (քարտուղար), *wiza - ravādīd* (վիզա) և այլն:

Արդյունաբերության ոլորտին բնորոշ բառեր, հասկացություններ՝ *bādi - otāq-e otomobil* (մեքենայի թափք), *perfiābriket-touliid sode dar kārxāne* (պատրաստի արտադրանք), *čālān-faāl* (գործող, աշխատող), *six-e gul-milgerd* (ամրան), *nat-mohre* (պնդողակ) և այլն:

Գյուղատնտեսության բնագավառի հասկացություններ արտացոլող բառեր՝ *jawāri - zorrat* (եգիպտացորեն), *čārmaqz - gerdu* (ընկույզ), *xoškābi - xoškālī* (երաշտ), *zardak- havīf* (զազար), *rumi-goujefarangī* (լուլիկ) և այլն:

Առողջապահության բնագավառին բնորոշ բառեր, հասկացություններ՝ totla - loknat-e zabān (կակազ), hefzossahhiya - behdāst (հիգիենա), dermeltun - daruxāne (ղևաղատում), mrastun - asayešgāh-e sālmāndān (ծերանոց) և այլն:

Կենդանական աշխարհին արտացոլող բառեր՝ sangbaqa - sangpošt (կրիա), nažārak - dārkuḅ (փայտփորիկ) և այլն:

Ռազմական բնագավառում կիրառվող բառեր, բառ-տերմիններ՝ bolukmešer - farmānde-ye daste (դասակի իրամանատար), drestiz - setāde ko II (զվապետ շտաբ), rasm-e gozāst-reze (շքերթ), qulordu-sepāh (կորպուս), yaraqmāl-gerougān⁵ (պատանդ) և այլն:

Կենցաղի ոլորտին վերաբերող բառային միավորներ՝ ābbāzi⁶-šenā (լոռ), ātešgolkon⁷-ātešxamuskon (կրակմարիչ), paṭun⁸-šalvar (տաբատ), čāyjuš-keṭri (թեյնիկ) և այլն:

Աշխարհագրական անվանումներ՝ almaqreb-marākeš (Մարոկկո), bahrulkāhel⁹ - oqyānus - e ārām (Խաղաղ օվկիանոս), beytulmoqaddas - ursālim (Երուսաղեմ), hāg - lāhe (Հաագա) և այլն:

Արհեստների և առանձին մասնագիտությունների բնագավառներին վերաբերող բառ-անվանումներ՝ tarjomān - motarjem (թարգմանիչ), fawāli - bārbar (բեռնակիր), rangmāl - rangkār (ներկարար) և այլն:

Մարմնի մասերին առնչվող բառեր՝ borut - sebil (բեր), kopak - gujpošt (սապատավոր), gorda - koliye (երիկամ) և այլն:

Հատկանիշ ցույց տվող բառեր՝ čatal - kasif (կեղտոտ), qāq - bayāt (չորացած հաց), nesāyi - zanāne (կամացի), wārxatā¹⁰ - dastpāče (շվաքված) և այլն:

Խմաստային կառուցվածքի տարբեր բնութագրումներով և հնչյունական կազմով տարբերվող բառեր.

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերում դիտարկվող հնչյունական և ուղղագրական համակարգերի տարբերությունների և նրանցում առանձնացվող իմաստաբանական դաշտերի առանձնահատկությունների բացահայտման ընթացքում նկատվում են բառերի երկու այլ խմբեր, որոնք հիմնականում ընդհանուր լեզվից եկող բառերն են, սակայն այսօրվա դրությամբ ընդհանուր լինելով հանդերձ, մի դեպքում ներկայացնում են հնչյունական կազմի որոշ փոփոխություններ, մյուս դեպքում՝ իմաստային տարբեր պատկերներ.

1. Հնչյունակազմերով և զրոյքայնոր նույն բառեր, որոնք ներկայացնում են իմաստաբանական տարբեր բնութագրումներ՝ սեռատեսակային հարաբերություններ

Այս տիպի բառերի օրինակ են ծառայում alwān, enkešāf, talāsi և այլն: Նրանցից առաջինը՝ alwān-ը դարիում արտահայտում է «կարմրագույն» նշանակությունը, իսկ պարսկերենում՝ «զուռնավոր», երկրորդը՝ enkešāf-ը դարիում արտահայտում է «առաջընթաց», իսկ պարսկերենում՝

«խայտնագործում», երրորդը՝ *talāsi* բառը դարիում նշանակում է «խուզարկում», «տակնուվրա (անել)», իսկ պարսկերենում՝ «քայքայում»:

2. Գործքայմք մույն, բայց հնչյունակազմով և իմաստով տարբեր բառեր

Դարիի *axta*, *adwiya*, *eāša*, *afsāna*, *pelawar*, *jāla* հնչյունակազմով բառերը կիրառվում են «ապխտում», «դեղորայք», «ուտելիք», «առակ», «մետաքսագործ», «կարկուտ» իմաստներով, իսկ պարսկերենում մույն գրությամբ, սակայն *axte*, *advie*, *eāše*, *afsāne*, *pilevar*, *jāle* հնչյունակազմերով գործածվում են «կրտած», «համեմունք», «ապրտստ», «առասպել», «չարի», «ցող» իմաստներով և այլն:

II. Դառն լեզվի քառակազմական ասանձնահատկությունները պարսկերենի համատեղությամբ

Դարիի և պարսկերեն լեզուները քառակազմության բնագավառում ընդհանուր առմամբ շատ մոտ են: Նրանց ընդհանրությունները վերաբերում են ինչպես նյութական միջոցներին, այնպես էլ կազմության կաղապարներին: Սակայն դրա հետ մեկտեղ նրանք ներկայացնում են նաև բազմաբնույթ տարբերություններ, որոնք հիմնականում վերաբերում են նրանցում գործող բառաբարդմանը, բառածանցմանը, այդ թվում բայակազմությանը, բարդ թվականների ձևավորմանը, ինչպես նաև ընդհանուր պարսկական հնարանությունների գործածությանը, արաբերենին հատուկ բառակազմական ձևերով բառակերտումներին, հապավումների կազմությանը և այլ գործընթացներին:

Ստորև ներկայացվում են այդ տարբերություններից ամենատարածվածները:

1. Ածանցավոր բառեր

ա. Գոյականակերտ ածանցներով նորակազմություններ

Փուշտուից դարի անցած հնդկական ծագում ունեցող *wāl* և *wālā* գոյականակերտ վերջածանցների միջոցով դարիում կազմվում են մի շարք բառային միավորներ ինչպես սեփական, այնպես էլ օտար լեզուներից փոխառած բառերով, որոնք ցույց են տալիս անձի պաշտոնը, մասնագիտությունը, զբաղմունքը, ունեցվածքը և այլն¹¹: Օրինակ՝ *siyāsāt-wāl*¹² (քաղաքական գործիչ), *barq-wālā* (էլեկտրիկ), *šer-wālā* (կաթնավաճառ), *gomrok-wālā* (մաքսատան աշխատող) և այլն:

Դարիում *bān* և *wān* ածանցներով ևս կազմվում են մի շարք բառեր, որոնք չեն գործածվում պարսկերենում: Օրինակ՝ *gallabān* (հովիվ), *gādiwān* (սայլապան), *gādiwbān* (սայլապան), *pādawān* (հովիվ), *sārawān* (քարավանապետ), *sagwān* (շներ հսկող) և այլն: Այս կարգի բառերից *wān* ածանցով կազմվող բառերը հատկապես գործածվում են խոսակցական դարիում, որտեղ նշված *wān* գոյականակերտ ածանցը ինքը հենց ձևափոխված մույն *bān* ածանցն է: Դարիին հատուկ է նաև *rān* գոյականակերտ ածանցը, որը ցույց է տալիս անձ և պաշտոն: Այս ածանցը խոսակցական լեզվում հաճախ գործածվում է ձայնափոխված *wān* ձևով: Օրին-

նակ՝ gādirān - gādiwān (սայլապան), tayyararan - tayyarawan (օղաչու), karācīrān - karāciwān (սայլապան) և այլն:

Լեզվում լայն գործածություն ունի նաև խոսակցական ուրորտին քնորոշ *gak* գոյականակերտ ածանցը¹³, որն, օրինակ, պարսկերենում բացակայում է: Այս ածանցը համապատասխանում է հայերենի -իկ, -ուկ, -ակ ածանցներին արտահայտելով «նվազականության», «քնքշանք», «փաղաքշամք» իմաստները: Օրինակ՝ *baččagak* (մանկիկ), *čučagak* (ճուտիկ), *kaštigak* (նավակ), *nawagak* (թռռնիկ) և այլն:

Այս ածանցով դարձում կազմվում են մի շարք այլ բառեր, այդ քվում բաղադրյալ բայեր, ինչպես նաև դարձված-տերմիմներ, որոնց մի մասում -իկ նվազական ածանցը կորցրել է իր իմաստը: Օրինակ՝ *godigak šodan* (ամոքից կարմրել), *abrugak zadan* (աչքով անել), *sānigak zadan* (բանի տեղ չդնել), *keligak šodan* (պապանձվել) և այլն:

Գոյականակերտ *dāni* ածանցով կազմվում են նոր բառեր, որոնք գործածվում են որպես ամանների և այլ կենցաղային իրերի անվանումներ: Դարբիի այս ածանցը համապատասխանում է պարսկերենի *dān* ածանցին: Օրինակ՝ *cāy dāni* (թեյաման), *gold dāni* (ծաղկաման), *kāqaz dāni* (աղբաման), *namak dāni* (աղաման) և այլն:

Գոյականակերտ *i* ածանցը, որը կա երկու լեզուներում, դարձում է տարբերություն պարսկերենի, ինչպես սեփական, այնպես էլ փոխառված բառերից կազմում է նաև գոյականներ: Դրանց օրինակ են հանդիսանում. *tabdili* (փոփոխություն), *maʾjūdi* (զույքագրում), *nal dāwāni* (խողովակադրություն), *tarjōm dāni* (թարգմանչություն) և այլն:

բ. Մակբայակերտ ածանցներով բառեր

Պարսկերենի և դարբիի համար ընդհանուր ուղղագրությամբ *āne* (դարձում *āna*) ածանցով կազմված որոշ ածականներ, որոնք կիրառվում են որպես համեմատական իմաստով մակբայներ, դարձում, ստանալով նաև *wār* ածանցը, կազմում են նոր մակբայներ նույն նշանակության զանազան նրբերանգներով: Օրինակ՝ *dozdānawār* (զողաբար), *begānawār* (օտարաբար), *mardānawār* (տղամարդավարի), *mastānawār* (հարբածի մեման) և այլն:

Դարբիի մի խումբ գոյականներ և ածականներ, ստանալով *wār* կա՛մ *wāri* ածանցներ, կազմում են նոր բառեր, որոնք ավելի շատ արտահայտում են ածականի իմաստ¹⁴: Օր.՝ *baččawār-baččawāri* (մանկան պես), *hawtawār-hawtawāri* (շաքաթական), *ostokwār-ostokwāri* (մանկան պես), *āšeqwār* (սիրահարի պես), *bozorgwāri* (մեծի պես) և այլն:

Ավելացնենք, որ *wāri* ածանցով կազմված բառերը հիմնականում հատուկ են խոսակցական դարբիին :

Դարբիին հատուկ են նաև մի շարք ժամանակի մակբայներ, որոնք կազմվում են *aki* ածանցի օգնությամբ: Օրինակ՝ *sāmaki*¹⁵ (երեկոյան), *cāstaki*¹⁶ (կեսօրին), *degaraki* (երեկոյան) և այլն:

Այս *aki* ածանցի օգնությամբ դարիում մի խումբ գոյականների միջոցով կազմվում են նոր բառեր, որոնք ցույց են տալիս առարկայի որակը, նրա հատկությունը: Օրինակ՝ *šartaki* (պայմանով, պայմանական), *xaraki* (իշավարի), *sangaki* (ամուր, քարի պես) և այլն:

2. Արաբերենի ձե հոգնակերտ մասնիկով նորակազմ բառեր

Դարիի բառային կազմում դեռևս պահպանվում են արաբական ձե հոգնակերտ մասնիկով բազմաթիվ բառեր¹⁷, որոնք արտահայտում են ինչ-պես եզակիի. այնպես էլ հոգնակիի իմաստներ: Օրինակ՝ *ekmālāt*¹⁸ (մատակարարում), *ta'mināt* (ապահովագրություն), *gomrokāt* (մաքսատուն), *ejrāāt* (ծախսեր), *woquāt* (դեպքեր) և այլն:

Այս երևույթը նկատվել է նաև հայերենում, երբ առանձին բառերի ք հոգնակիակերտը վերածվել է բառակազմական ածանցի, իսկ բառը երկրորդաբար հոգնակի ձև է ստացել այլ մասնիկով (ոտք, ձեռք, միտք, խելք):

Դարիի վերը նշված հոգնակերտ մասնիկով կազմվող որոշ բառերում դիտվում է վերջնահար չինչող հ-ի աղում: Օրինակ՝ *ma'mulāt* (արտադրանք), *qataāt* (գորամասեր, զինվորական միավորումներ) և այլն:

3. Արաբերենի հատուկ բառակազմական ձևերով նոր միավորներ

Դարիում նոր բառեր են կազմվում նաև նրանում լայն գործածություն ունեցող արաբերեն լեզվի *belā* (առանց)՝ սեռը բնութագրող *be* (-ով) և ժխտական *lā* (ոչ) մասնիկներից կազմված սեռը արտահայտող ցուցիչով: Օր.՝ *belāestesnā* (առանց բացառության), *belātawaqof* (անհետաձգելի), *belā qayd o šart* (անպայման), *belāewaz* (անվերադարձ) և այլն:

Այս և նման տիպի կառուցվածքները կիրառվում են ածականական և մակբայական նշանակությամբ:

Հաճախական կիրառությամբ են բնութագրվում նաև բառեր, որոնք կազմված են սեռանիշ *be* մասնիկի և *āl* որոշիչ հոդի օգնությամբ: Լեզվում լայն գործածություն ունեն նաև *an* սեռանիշ (հարձ-ե ջառ) մասնիկի միջոցով կազմված միավորներ: Օր.՝ *be'lxosus* (հատկապես), *be'ltab* (ըստ էության), *be'lmocābel* (փոխադարձաբար), *anqarib* (շուտով) և այլն:

Քիչ չեն նաև արաբական *lā* ժխտական մասնիկով կազմված բառեր, որոնք իրենց իմաստով համապատասխանում են պարսկերենի *bi* և *nā* ժխտական մասնիկներով կազմվող բառերին՝ *lāentehā* - *bi entehā* (անվերջ), *lādarak* - *bi xabar* (անտեղյակ), *lāalā* - *moāiefenāpāzir* (անբուժելի), *lāyanqat* - *veqfe napazir* (անընդմեջ) և այլն:

Լայն գործածություն ունեն նաև արաբերենի *qasir* (կարճ), *jadid* (նոր), *tawil* (երկար), *kasir* (շատ), *dār* (տուն), *hefz* (պահպանում), *moxtalef* (զանազան), *qarib* (մոտ) բառերով և *āl* որոշիչ հոդի օգնությամբ կազմվող նոր բառեր: Օրինակ՝ *jadidolta'sis* (նորաստեղծ), *jadidolzar* (նոր ցանք), *qasirolmoddat* (կարճատև), *moxtalefolnau* (բազմազան), *dārolensā* (քարտուղարություն), *dārolulum* (ակադեմիա), *dārolsaltana* (արքունիք), *kasirolentesār* (բազմատիրաժ), *kasirolmellat* (բազմազգ), *hefzossahhiya*

(հիզինմա) և այլն:

Ի տարբերություն պարսկերենի, դարիում շատ գործածական են նաև արաբերեն *hatta* (մինչև), *hatmi* (անպայման), *and* (մոտ), *taht* (տակ), *hasb* (ըստ), *zi* (ունեցող) ցուցիչներով (նախդիրներ) կազմվող նոր բառերը: Օրինակ՝ *hattalemkān* (հնարավորության սահմաններում), *hattalmaqdur* (հնարավորության սահմաններում), *hatmiolwoqu* (անխուսափելի), *andalemkān* (հնարավորության սահմաններում), *andalmotāleba* (ցպահանջ), *tahtolarzi* (ստորգետնյա), *tahtolhemāya* (հովանավորության ներքո), *hasbolamr* (հրամանի համաձայն), *zialāqa* (շահագրգիռ) և այլն:

4. *Բարդ գոյականներ և բաղադրական կազմություններ*

Համեմատվող երկու լեզուներում էլ *sar* բաղադրիչով գործածվում են բազմաթիվ ընդհանուր իմաստ արտահայտող բարդ բառեր, սակայն ի տարբերություն պարսկերենի, դարիում կազմվում են մի շարք նոր գոյականներ, որոնք հիմնականում բառապատճենումներ են: Օրինակ՝ *sarinjinyer* (զլխավոր ինժեներ), *sarkārgar* (քրիզադավար), *sarmohāseb* (զլխավոր հաշվապահ), *sargonsul* (զլխավոր հյուպատոս), *sartabib* (զլխավոր բժիշկ) և այլն:

Դարին ժամանակի ընթացքում իր բառապաշարը հարստացրել է ինչպես սեփական, այնպես էլ զանազան լեզուներից վերցրած բառերով ու բառակազմական միջոցներով: Ընդ որում այս բառերը և բառակազմական միջոցները փոխառվել են տարբեր լեզուներից, մասնավորապես.

ա. *Փռշտուից՝* *patra* → *patragar* (հախճապակյա ամաններ նորոգող), *tal* → *tal-e-but* (կոշիկի տակի կաշի), *til* → *tilkaši* (յուղազտում) *derīši* → *derīši-ye kār* - (աշխատանքային զգեստ), *zina* → *zinaxāna* (աստիճանավանդակ), *godī* → *godī parān* - (օղապարիկ) և այլն:

բ. *Հնդկական¹⁹ լեզուներից՝* *awdorbačča* - *pesaramu* (հորեղբոր տղա), *čawkidār* - *darbān* (պահակ), *kaṭāwi* - *hamegāni* (մասսայական), *kelkinča*²⁰ - *havākeš* (օդանցք), *nāsekka* - *nātani* - (խորթ) և այլն:

գ. *Ռոմանագերմանական և սլավոնական լեզուներից՝*

Դարիի և պարսկերենի բառային կազմերի միջև գոյություն ունեցող տարածված տարբերություններից մեկն էլ այն է, որ նրանցում շատ հաճախ միևնույն առարկաներն ու երևույթները անվանում են տարբեր բառերով, որոնք կազմվում են ինչպես սեփական, այնպես էլ փոխառյալ բառերով կամ ամանցներով: Այս կարգի բառերի շարքին դասվում են.

Անգլերենից փոխառված *box* (տուփ, արկղ, սնդուկ), *ticket* (տոմս), *cream* (կրեմ), *pencil* (մատիտ), *oil* (յուղ) բառերը, որոնք դարիում *baks*, *teket* կամ *teyket*, *kerim*, *pensel* կամ *pensen*, *āyl* ձևերի հնչյունափոխվելուց հետո գործածվում են հետևյալ բառակազմություններում: Օրինակ՝ *āyldāni* - *rouqandān* (յուղաման), *baks-e jeybi* - *kif-e jibi* (դրամապանակ), *teket-e posta* - *tambr* (մամակահիշ), *teket-e lāteri* - *belli-e baxtāzmāyi* (վիճակախաղի տոմս), *kerim-e but* - *vāks* (կոշիկի ներկ, վաքս), *māstar pelān* -

barnāme-ye koll (զխավոր պլան), *layndawani* - *simkeši* (լաբանցում) և այլն:

Ռուսերեն լեզվում կիրառվող *техник, микрорайон, комбинат, форма, аппарат* բառերը գործածվում են *taxnik, makroryān, kāmbināt, forma, aparāt* գրությամբ ու հնչյունակազմով:

5. *Բառաբարդում*

Լեզվի բառապաշարի հարստացման մեկ այլ միջոց է մաս բառաբարդումը: Այս երկու լեզուներն էլ հարուստ են բարդ բառերի կազմության հնարավորություններով: Տարբեր խոսքի մասերի միջոցով կազմում են ինչպես համադասական հարաբերություններով, այնպես էլ ստորադասական հարաբերություններով բարդություններ՝ համադրական կամ հարադրական կազմությամբ: Պարսկերենում և դարիում մշված երկու տեսակի բարդություններն իրենց կազմությամբ տարբերվում են:

Դարիում պարսկերենի հետ ընդհանուր իմաստ արտահայտող բարդություններում տեղի է ունենում ոչ միայն բաղադրիչ եզրերի տեղափոխություն, այլև նրանցից մեկի հնչյունափոխություն կամ ձևափոխություն, նույնիսկ երբեմն էլ որևէ բառի ավելացում: Այս տեսակի բարդ քանձրացական և վերացական գոյականներ կազմվում են գոյականին գոյականի ավելացմամբ, գոյականին ածականի ավելացմամբ, բայերի անցյալի հիմքերի միմյանց համադրությամբ, բայերի ներկայի հիմքերի ավելացմամբ և այլ կադապարմերով, երբ բաղադրիչներից առաջինը ըստ իմաստի լինում է երկրորդի լրացումը, և հակառակը, երբ բարդության զխավոր իմաստը արտահայտվում է առաջին մասի մեջ, և նրան լրացնում է երկրորդ բաղադրիչը: Օրինակ՝ *čapkuča* - *kučecap* (սարուձոր), *harām maqz* - *maqz-e harām* (ողնուղեղ), *sorfasiyāh* - *siahsorfe* (կապույտ հագ), *āmad o raft* - *raftoāmad* (գնալ-գալ), *bāl o par* - *par o bāl* (թև) [թև+թև], *qālmaqāl* - *qāl o qāl* (աղմուկ-աղաղակ) և այլն:

Բարդ ածականներ կազմելիս դարիում, հակառակ պարսկերենի, նույնպես տեղի է ունենում ինչպես բաղադրիչ եզրերի տեղափոխություն, այնպես էլ շաղկապի սղում: Իսկ առանձին դեպքերում էլ այդ լեզուների ընդհանուր ածականը մեկում լինում է պարզ, մյուսում՝ բաղադրյալ կազմություններով: Այսպիսի ածականներ կազմվում են ինչպես գոյականին ածականի ավելացմամբ, այնպես էլ գոյականների կրկնությամբ: Օրինակ՝ *be poštapanāh* - *bi panāh* (անպաշտպան, առանց պաշտպան ունենալու), *jofttāq* - *tak o joft* (զույգ-կենտ), *sarddīl* - *delsard* (սառնասիրտ), *nafastang* - *tangnafas* (շնչահեղձ) և այլն:

6. *Բարդ քվականներ*

Դարիում դեռևս գործածվում են հնդկական ծագում ունեցող *lak* («հարյուր հազար») և *kror*⁻¹ (տասը միլիոն) քանակական քվականները, որոնք ժամանակին նույնպես ընդունված են եղել պարսկերենում, որտեղ սակայն վերջինս գործածվում էր *korur*²² հնչյունակազմով և մշանակում էր

ոչ թե «տասը միլիոն», այլ «հինգ հարյուր հազար»: Այսօր իրենց կազմությամբ իրարից տարբերվում են նաև *դարիում* և պարսկերենում կիրառվող «երկու հարյուր», «երեք հարյուր» և «հինգ հարյուր» քանակական բարդ քվականները:

Վերոհիշյալ *dosad, sesad, panjsad* քանակական բարդ քվականները դարիում, ի տարբերություն պարսկերենում տեղ գտած *dvist, devist, sisad* և *pānsad* ձևերի, կիրառվում են միավորների և հարյուրավորների միակցմամբ, ըստ որում միավորը լինում է նախադաս: Ներկայացնում ենք նշված լեզուներում բարդ քվականների միջե ղիտարկվող մի շարք տարբերություններ: Օրինակ՝ *hejdah - hefđah* (տասնութ), *nozdah - nuzdah* (տասնինը), *dosad - devist* (երկու հարյուր), *sesad - sisad* (երեք հարյուր), *panjsad - pānsad* (հինգ հարյուր), *lak - sad hezār* (հարյուր հազար) և այլն:

Դարիում բազմազան են նաև քանակական քվականների հետ գործածվող դասանիշերը, որոնք շատ դեպքերում խիստ տարբերվում են մերօրյա պարսկերենում ընդունված դասանիշերից: Նշենք դրանցից մի քանիսը, որոնք կիրառվում են հետևյալ գոյականների դասանիշը ցույց տալու համար. օրինակ *saub - հագուստների, rāsta - բնակարանների, darband - խանութների, bāb - դռների, լուսամուտների, շենքերի, toqrā - կմիքների, pāye - մեքենասարքավորումների, էլեկտրական սարքավորումների, սեղան-աթոռի, qāb - ժամացույցների, asla - ծառերի, տունկերի, panja - բանալիների, jura - կոշիկների, ձեռնոցների, six - ասեղի, tār - պարանի, թելի, yaxan - վերնաշապիկների, dāne - դանակների, պատառաքաղների, մոմերի* համար և այլն:

7. Բայկազմություններ

Փուշտուի միջոցով դարիին անցած *āleš* (փոխանակում), *andiwāli* (բարեկամություն, ընկերություն), *pāleš* (փայլեցում), *pečkāri* (սրակում, ներարկում), *tayār* (պատրաստ), *jağra* (վեճ), *cālān* (միացում), *sāṭteri* (զբոսանք, ժամանց), *sayl* (դիտում), *gađ* (խառը), *kut* (կույտ) բառերով, հնդկական լեզուներից դարի մուտք գործած *cātal* (կեղտոտ, աղտոտ), *čir* (պատառ), *lat* (ծեծ) բառերով, ինչպես նաև թյուրքական լեզուներից փոխառած *toy* (ամուսնանություն, հարսանիք) բառով կազմում են բազմաթիվ բարդ և հարաբարդ կազմություններով բայեր: Օրինակ՝ *āleš kardan* (փոխել), *andiwāli kardan* (բարեկամություն անել), *pāleš kardan* (փայլեցնել), *pečkāri kardan* (սրակել, ներարկել), *toy kardan* (ամուսնանալ), *sāṭteri kardan* (զբոսնել), *kut kardan* (կուտակել), *lat kardan* (ծեծել), *māšincālāni kardan* (շարժիչը աշխատեցնել) և այլն:

Այս նույն եղանակով դարիում անցվեցին փոխառած *aksidan, āfar, brodkāst, bandāi, palastar, pāking, pelān, dāyl, dreywar, dizāyn, rikārd, sekī, layn, woldeng, hāran* և ֆրանսերենից վերցրած *sābotāi, sort* բառերի օգնությամբ կազմվում են մի շարք նոր բառեր. Օրինակ՝ *āfar gerftan* (ստանալ առաջարկներ), *aksidan kardan* (բախվել՝ մեքենայով), *brodkāst kardan* (հաղորդել ռադիոյով),

bandāy bastan (վիթակապել), palastarkāri kardan²³ (սվաղում, սվաղել), pārkīng kardan²⁴ (կանգ առնել), pelāngozāri kardan (ծրագրավորել), dāyi kardan (հավաքել հեռախոսահամար), dreyvari kardan (վարել մեքենա), dizāyn kardan²⁵ (ձևավորել), rikārd bastan (ռեկորդ սահմանել), sābotāj kardan (սաղորել), sortbandi kardan (տեսակավորել), seki kardan²⁶ (դահուկով սահել), layn andāzi kardan (լարանցում կատարել), woldengkāri kardan²⁷ (գողել), hāran zadan (ազդանշան տալ) բայակազմությունները:

Ի տարբերություն պարսկերենի, դարիի բայի բնագավառում (հատկապես խոսակցական լեզվում) հանդիպում են բարդ բայեր, որոնք կազմվում են կամ ենթակայական դերբայի և օժանդակ բայի համադրությամբ կամ խոնարհվող բայի անցյալի հիմքով ու օժանդակ բայով կամ էլ անցյալի դերբայի և budan (լինել) ու kardan (անել) օժանդակ բայերի օգնությամբ: Օրինակ՝ *estād kardan - istādan* (կանգնել), *xāb kardan - xābīdan* (քնել), *basta kardan - bastan* (փակել), *poxta kardan - poxtan* (եփել, խաշել), *xanda kardan - xandidan* (ծիծաղել), *rawān kardan - ferstādan* (ուղարկել) և այլն:

Ներկայացված համեմատություններից երևում է, որ բայական ուրույն կառուցվածքներ պարսկերենում հանդիսանում են պարզ կազմություններ, մինչդեռ դարիում մրանք ներկայացված են իբրև բարդ բայեր և վկայում են այն մասին, որ դարիի ավելի հարազատ է մնացել ընդհանուր լեզվում ժամանակին կիրառվող բառակազմական ձևերին, քան պարսկերենը:

Դարի և պարսկերեն լեզուների բառային կազմերում տևական զարգացման ընթացքում գոյացել են բազմաթիվ հնչյունական տարբերություններ, որոնք առանձին դեպքերում հանգեցրել են քերականական ցուցիչների հնչյունական փոփոխությանը: Մասնավորապես, այս երկու լեզուների բայի խոնարհման համակարգում ընդհանուր ու նախամասնիկը և ու ժխտական մասնիկը դարիում կիրառվում է *me* և *ne* հնչյունակազմերով: Նշենք նաև՝ զրությամբ ընդհանուր հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի դիմային վերջավորությունները պարսկերենում կիրառվում են *im* և *id*, իսկ դարիում՝ *em* և *ed* տարբերակներով²⁸: Օրինակ՝ *namerawam - nemi ravam* («չեմ գնում»), *namerawi - nemi ravi* («չես գնում»), *namerawad - nemi ravad* («չի գնում»), *namerawem - nemi ravim* («չենք գնում»), *namerawed - nemi ravid* («չեք գնում»), *namerawand - nemi ravand* («չեմ գնում») և այլն:

III. Դարի և պարսկերեն լեզուների բառափոխական առանձնահատկությունների համեմատական-համադրական բնութագիրը

Երկու լեզուներում բառակազմական տարբերություններից բացի դիտվում են նաև առանձին տարբերություններ բառափոխության համակարգերում, որոնք վերաբերում են բացառապես բայի խոնարհման դեպքերին, մասնավորապես, առանձին ժամանակների կազմությանը:

Դարի և պարսկերեն լեզուները ընդհանուր առմամբ ձևակազմության շատ մոտիկ համակարգեր ունենալով հանդերձ, դրսևորում են նաև առանձին տարբերություններ, որոնք վերաբերում են հատկապես բայի խո-

նարհման հարացույցին (պարադիգմային): Մասնավորապես, հատկանշական է առաջին հերթին ապառնի ժամանակի ձևերի կազմությունը դարիում: Այստեղ ապառնի ժամանակը կազմվում է խոնարհվող բայի և *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայի անցյալի հիմքերով: Ընդ որում խոնարհվող բայի անցյալի հիմքին ավելանում են համապատասխան դիմային վերջավորություններ, իսկ օժանդակ բայի անցյալի հիմքը բոլոր դեմքերի եզակի և հոգնակի քվերում մնում է անփոփոխ: Պարսկերենի այս ժամանակը կազմվում է այլ եղանակով՝ խոնարհվող բայի անցյալի հիմքի և *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայի ներկայի հիմքով: Այստեղ խոնարհվող բայի անցյալի հիմքն է բոլոր դեմքերի եզակի և հոգնակի քվերի համար մնում անփոփոխ, իսկ օժանդակ բայի ներկայի հիմքին միանում են համապատասխան դիմային վերջավորություններ: Օրինակ՝ *xāhad raftam* - *xāham raft* («կզնամ»), *xāhad rafti* - *xāhi raft* («կզնաս»), *xāhad raft* - *xāhad raft* («կզնա»), *xāhad raftem* - *xāhim raft* («կզնանք»), *xāhad rafted* - *xāhid raft* («կզնաք»), *xāhad raftand* - *xāhand raft* («կզնան») և այլն:

Դարիում գործածվում է նաև ապառնի ժամանակի մեկ այլ ձև, որը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայի, *xāstan* («ցանկանալ») և *budan* («լինել») օժանդակ բայերով: Այս ձևի կազմության ժամանակ խոնարհվող բայի բոլոր դեմքերում, եզակի և հոգնակի քվերում անփոփոխ մնացող անցյալի դերբային ավելանում է *xāstan* («ցանկանալ») օժանդակ բայը համապատասխան դիմային վերջավորություններով և *budan* («լինել») օժանդակ բայը, որը հանդես է գալիս իր անցյալի հիմքով ու նույնպես անփոփոխ է եզակի և հոգնակի քվերի բոլոր դեմքերի համար: Օրինակ՝ *rafta xāham bud-xāham raft* («կզնամ»), *rafta xāhi bud* - *xāhi raft* («կզնաս»), *rafta xāhad bud-xāhad raft* (կզնա), *rafta xāhem bud-xāhim raft* («կզնանք»), *rafta xāhed bud-xāhid raft* («կզնաք»), *rafta xāhand bud* - *xāhand raft* («կզնան») և այլն:

Դարի և պարսկերեն լեզուների կարևոր տարբերություններից է նաև դերբայական ձևերով բայերի ժամանակաձևերի կազմությունը: Ի տարբերություն պարսկերենի, դարին ներկայացնում է երկու դերբայով կազմվող ժամանակաձևեր, որոնք կազմվում են *budan* («լինել») օժանդակ բայի օգնությամբ:

Օրինակ՝ *rafta buda bāšam* («զնացած լինեի»), *rafta buda bāši* («զնացած լինեիր»), *rafta buda bāšad* («զնացած լինեք»), *rafta buda bāšem* («զնացած լինեինք»), *rafta buda bāšed* («զնացած լինեիք»), *rafta buda bāšand* («զնացած լինեին») և այլն:

Մեկ այլ դեպքում դարին նշանակալիորեն տարբերվում է պարսկերենից նրանում կիրառվող խոսակցական լեզվից մուտք գործած ձևերի կազմությամբ, որոնք համապատասխանում են սահմանական եղանակի անցյալ անկատար և անցյալ շարունակական ժամանակաձևերին: Անցյալ անկատար ժամանակի ձևը կազմվում է խոնարհվող բայի անցյալի անկատար ժամանակի և *zadan* («սփռել») բայի անցյալ դերբայի միացությամբ:

Այս դեպքում *zadan* («խսիել») բայը հանդես է գալիս որպես օժանդակ բայ ե բոլոր դեմքերի եզակի ու հոգնակի թվերի խոնարհման ժամանակ մնում է անփոփոխ: Օրինակ՝ *zada me raftam* («զմում էի»), *zada me rafti* («զմում էիր»), *zada me raft* («զմում էր»), *zadan me raftem* («զմում էինք»), *zada me rafted* («զմում էիք»), *zada me raftand* («զմում էին»), որոնք պարսկերենում համապատասխանաբար կիրառվում են հետևյալ ձևերով՝ *mi raftam* («զմում էի»), *mi rafti* («զմում էիր»), *mi raft* («զմում էր»), *mi raftim* («զմում էինք»), *mi raftid* («զմում էիք»), *mi raftand* («զմում էին») և այլն:

Անցյալ շարունակական ձևը կազմվում է խոնարհվող բայի անցյալ դերբայի, *budan* («ղինել») բայի անցյալ կատարյալ ժամանակաձևերով և նրանց շաղկապող *rāhi* բառի միջոցով: Այս դեպքում *budan* («ղինել») բայը հանդես է գալիս որպես օժանդակ բայ, եզակի ու հոգնակի թվերի բոլոր դեմքերում ենթարկվում է փոփոխության, իսկ խոնարհվող բայի անցյալ դերբայը և շաղկապող *rāhi* - ին բոլոր դեմքերում, եզակի և հոգնակի թվերում մնում են անփոփոխ: Օրինակ՝ *rafta rāhi budam* («զմում էի»), *rafta rāhi budi* («զմում էիր»), *rafta rāhi bud* («զմում էր»), *rafta rāhi budem* («զմում էինք»), *rafta rāhi buded* («զմում էիք»), *rafta rāhi budand* («զմում էին»), որոնք պարսկերենում համապատասխանաբար գործածվում են հետևյալ ձևերով՝ *dāštam mi raftam* («զմում էի»), *dāšti mi rafti* («զմում էիր»), *dāšt mi raft* («զմում էր»), *dāstim mi raftim* («զմում էինք»), *dāstid miraftid* («զմում էիք»), *dāstand miraftand* («զմում էին») և այլն:

Վերը թվարկված տարբերությունները, որոնք հակադրում են երկու լեզուների բայերի խոնարհման համակարգերը, մնացած բնագավառներում սուկա տարբերությունների հետ միասին վկայում են այդ լեզուների առանձին, ինքնուրույն ուղիներով զարգացման մասին:

A COMPARATIVE SURVEY ON WORD-BUILDING IN DARI AND FARSI LANGUAGES

This study is the first attempt in investigating the comparative word-formation in modern Dari and Farsi languages. The work embraces semantical, morphological and word-building aspects of Dari and Farsi and their interrelations conducted by the author. The outcome of the studies, most probably, may have a significant importance both from the viewpoint of carrying out fundamental historical and comparative studies and of solving some specific practical problems referring, mainly, to compiling manuals, textbooks, dictionaries in Dari and Farsi as well as doing translation work.

ՑԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Виноградова С.П., Пирейко Л.А., Карманный дари-русский словарь, М., "Русский язык", 1989, с.323.
2. Safae J. N., English - Dari Daily idioms dictionary, Compiled & Published by Naim Jnnbaz Safae, Kabul, 1973, p. 172.
3. Փարսաբանյան Վ.Խ., Պարսկերեն-դարի-հայերեն և դարի-պարսկերեն-հայերեն բառարան, Երևանի «Հրաշա Աճառյան» համալսարան, Երևան, «Տղարան Մեծ», 2002, էջ 224:
4. Նալբանդյան, էջ 198:
5. Նալբանդյան Գ.Մ., Պարսկերեն - հայերեն բառարան, Երևան, «Լույս», 1987, էջ 487:
6. Островский Б. Я., Карманный русско-дари словарь, Москва, "Русский язык", 1987, с. 225.
7. Киселева Л.Н., Миколайчик В. И., Дари-русский словарь, Москва, "Русский язык", 1978, с. 25.
8. Afghaniawis Abdollah, Afghan ghamus farsi pa pashtu dar se jeld, Chape Shamir. Kabol. 1335-1336, jelde 1, s.291.
9. Слинкин М.Ф., Русско-дари военный и технический словарь, Москва, Военное издательство министерства обороны СССР, 1981, с. 831.
10. Safae J. N., English-Dari Daily idioms dictionary, p. 36.
11. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, Издательство "Восточной литературы", Москва, 1960, с.26.
12. Асланов М.Г., Афгано-русский словарь, Москва, "Советская Энциклопедия", 1966, с. 534.
13. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 27.
14. Там же, с. 28.
15. Киселева Л.Н., Миколайчик В.И., Дари-русский словарь, с. 472.
16. Там же, с. 273.
17. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 26.
18. Слинкин М.Ф., Русско-дари военный и технический словарь, с. 648.
19. Дорофеева Л.Н., Язык фарси-Кабули, с. 6.
20. Большая Советская Энциклопедия. М., "Советская Энциклопедия", 1972, третье изд., т.10, с.202.
21. Там же, с. 686.
22. Moin Mohammad, Farhange farsi dar shesh jeld, Entesharate Amirkabir, Tehran, 1375, jelde 3, s. 2959.
23. Hama marja, s. 2959.
24. Киселева Л.Н., Миколайчик В.И., Дари-русский словарь, с. 169.
25. Там же, с. 145.
26. Там же, с. 386.
27. Там же, с. 454.
28. Там же, с. 726.